




Ղազարոսի Հարությունը
(Մատենադարանի ձեռ. հ. 9422 Ավետարան, XIII-րդ հիշիկիա, ծաղկող՝ Թորոս Ռոսլին)



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՐԵՔԼԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ



յս տարի լրացավ հայերեն Աստվածաշնչի առաջին կամ ոսկանյան տպագրության երեքհարյուրամյակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մարտ 11 թվակիր կոնդակի հրահանգով և թելադրությամբ տարին հայտարարվեց հոբելյանական և հոկտեմբեր ամսվա մեջ սրբոց թարգմանչաց տոնախմբությունը և «Հայ մշակույթի օր»-վա հանդիսությունը նվիրվեցին Աստվածաշնչի առաջին տպագրության երեքհարյուրամյակին:

Հայոց Հայրապետը արդար հպարտությամբ և ցնծությամբ նշում էր Իր սրբատառ կոնդակում, որ «Հայ ժողովրդի հոգևոր նվաճումներեն մին հանդիսացավ Ս. Գրքի առաջին տպագրությունը... հազար վեց հարյուր վաթսու և վեց տարեթիվը հայ մշակույթի պատմության մեծագույն հանգրվաններեն մին կհանդիսանա»:

Արդարև, Աստվածաշնչի տպագրությունը պատմական և մշակութային մեծ իրադարձություն էր հայ կյանքում, և Սահակ-Մեսրոպյան եկեղեցական, մշակութային, հայրենասիրական մեծաքանակ գործի շարունակությունը՝ տպագրության միջոցով:

Գրերի գյուտից հետո հայ տպագրությունը մեծագործ իրադարձությունն էր հայ մշակույթի պատմության մեջ: Իսկ հայ տպագրության ամենավաղ արտահայտությունը,

մեծագույն նվաճումը՝ առաջին Աստվածաշնչի տպագրությունն էր: Գրերի գյուտով, Աստվածաշնչի թարգմանությամբ սկիզբ առավ մեր դպրությունը: Այնուհետև մեր մշակույթի զարգացման ողջ ընթացքի վրա, հայ հոգևոր ու մշակութային կյանքի բոլոր բնագավառների վրա, ինչպես նաև ազգապահման գործում հսկայական դեր կատարեց Աստվածաշունչը:

ԺՋ և ԺԷ դարերում, Մայր Հայրենիքում տիրող քաղաքական, տնտեսական ծանր պայմանների բերումով, առաջին հայ գիրքը տպագրվում էր Վենետիկում, 1512 թվականին, իսկ առաջին հայերեն Աստվածաշունչը՝ Ամստերդամի հայ գաղութի ծոցում՝ 1666 թվականին: Այնուհետև հայ տպագրությունն մի որոշ ժամանակ ևս շարունակում էր զարգանալ գաղթօջախներում, մինչև 1771 թվականը, երբ Մ. Աթոռում բացվում է առաջին հայ տպարանը՝ երջանկահիշատակ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763—1790) օրոք:

Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակի առթիվ, երախտագետ զգացմունքով ամենից առաջ մեր մտածումը կանգ է առնում լուսաբնակ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի (1655—1680) վրա, որպես մեծ գործի կազմակերպչի, հովանավորողի: «Աղաչեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվաստակաւորս ձեր» (Ա. Թեսալ. Ե 12):

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ծրագրերից մեկն էր՝ հայ ժողովրդի հոգևոր, մտա-

վոր լուսավորությունն ու քաղաքական ազատությունը:

Ոսկանյան Աստվածաշունչը տպագրվում է ըստ հիշատակարանների և պատմական վկայությունների «մեծի հրամանի իշխողի և վեհափառի կաթողիկոսի և պատրիարքի հայկազանս սեռի ներ պատրիարքարանում սրբոյ Էջմիածնի՝ լուսանկարի և Քրիստոսահիմնեցելոյ Տեառն Յակոբոս»: Ըստ ժամանակի հոյանդական աղբյուրների էլ վկայության, Ջուղայեցին համարվում է «արվեստի և գիտության նվիրված Հայաստանի պատրիարք Յակոբ»: Ջուղայեցին 1678 թվականին Մ. Աթոռում գումարում է Էջմիածնի պատմական գաղտնի ժողովը և անձամբ գլխավորում՝ քաղաքական անկախություններով Եվրոպա ուղևորվող առաջին ազգային պատվիրակությանը:

1662 թվականին, երբ Ոսկան վարդապետը կաթողիկոսի հանձնարարությամբ և օրհնությամբ մեկնում է Հոլանդիա՝ գլուխ բերելու Աստվածաշնչի տպագրության դժվարին, բայց շնորհակալ գործը, նա իրեն հետ էր տանում Հակոբ Ջուղայեցու հավանության արժանացած հայերեն Աստվածաշնչի ձեռագիր բնագիրը և Մ. Աթոռում կազմված «մի ամբողջ հրատարակչական ծրագիր» (Լեո):

Արդարև, Ոսկան վարդապետը վկայում է, որ ինքը Աստվածաշնչի տպագրության ձեռնարկել է «յուսացեալ ի Հոգին Սուրբ և ի սրբանուէր աղօթս քո վասն որոյ և մեք, ո՛վ հայր պատուական, ըստ բարձրագունից քոց հրամանաւ արարաք, գլխատելով և տնատելով, զհամարութիւնս և առընթեր մին դնելով բազմաւ աշխատութեամբ»:

Աստվածաշնչի առաջին հայերեն տպագրությունը, նախապես կատարված մի շարք փորձերից հետո, գլուխ բերվեց անմիջական հսկողությամբ, տքնությամբ և աշխատանքով, Մայր Աթոռի միաբան, «Բանի Տեառն սպասատր Ոսկան Երևանցոյ... յերկրէն Արարադայ, ի գիտաքաղաքէն Երևանայ»:

Ինչ խոսք, որ Աստվածաշնչի նման մեծածավալ և շատ բարդ բնագրով մասնագիտական գիրք հրատարակելը չափազանց պատասխանատու և դժվար գործ էր: Ոչ միայն անհրաժեշտ էին նյութական, տպագրական լայն հնարավորություններ, գիտական լուրջ աշխատանքի նախապայմաններ, այլև մանավանդ գործին հոգևոր փառած, նվիրված, տեսիլք ունեցող լուսամիտ մարդիկ:

Երբ թերթում ենք Ամստերդամի ա. Էջմիածնի անվան տպարանի վերաբերյալ վավերագրերը, հիմ հիշատակարանները, անցյալի փոշիների միջից, մոռացության

սեզից մի անգամ ևս վեր են հանում մեր նայվածքի առաջ, մեծ կամքի, նվիրումի և համատ աշխատանքի տեր մարդկանց՝ Մատթեոս սարկավազ Ժարեցու, Կարապետ վրդ. Անդրիանացու, վաճառական Ղլիճենց Ավետիսի և Ոսկան վարդապետի սրտատույ կերպարները, որոնք մոռացած ամեն ինչ, նվիրվել են իրենց ժողովրդի հոգևոր, կրթական լուսավորության գործին:

Տեսիլք ունեցող մարդկանցից մեկը եղավ նաև Էջմիածնի միաբան, համեստ վանականը, Ուշի ա. Սարգիս վանքի վանահայրը, որի փխրուն, կավեղեն մարմնի կանթեղի մեջ Նախախնամությունը վառել էր իր ժողովրդին, եկեղեցուն և հայրենիքին նվիրվելու անսպառ կրակը:

Ոսկան վարդապետը, ինչպես ա. Մեսրոպ Մաշտոցը իր ժամանակին, իր հայրենաակեր և ժողովրդասեր գործն է ձեռնարկում «տեսեալ զպակասութիւն Ազգին մերոյ հայկազնեաց ի կողմանէ ամենից գրոց յաւետ հարկաւորաց»:

Ե դարում ա. Մեսրոպի սիրտը նույնպես կարներ վառվում էր հայ ժողովրդի տխուր կյանքով և անստույգ ապագայի մտահոգություններով, երբ ձեռնարկում էր իր մեծ գործը. «տրտմություն է իմ համար և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայրների և ազգակիցների համար», ասում էր Ս. Մեսրոպ, ըստ Կորյունի վկայության:

ԺԶ և ԺԷ դարերում «հոգեվարքի վերջին րոպեներն էր ապրում և սահակ-մեսրոպյան ժառանգությունը՝ հայոց գրականությունը, — վկայում է Լեոն: Արդարև, սով էր հայ գրի ու գրականության: Ըստ պատմական տվյալների ԺԶ դարում հազիվ 20 Աստվածաշունչ կար վանքերում և անհատ մարդկանց մոտ: Ոսկան վարդապետ «հայեցեալ ի նուագութիւն Աստուածայնոց կտակարանաց», Աստվածաշնչի իր տպագրությամբ հայությանն ընծայաբերում էր երկու տարիների տքնաջան աշխատանքի, ճիգի և պայքարի արդյունք հանդիսացող իր շքեղ իրագործումը՝ Աստվածաշունչը, 5000 տպաքանակով:

Ամստերդամի ա. Էջմիածնի անվան տպարանում ոսկանյան Աստվածաշնչի տպագրությունը տևում է երկու տարի յոթ ամիս (1666 մարտից մինչև 1668 հոկտեմբերը)՝ հանդիսանալով շրջադարձային մի հանգրվան մեր մշակույթի պատմության մեջ, փառքը՝ համեստ հայ վարդապետի և հպարտությունը մեր ժողովրդի:

Մեծ էր Ոսկանի կատարած աշխատանքը, բարձրորակ՝ իր տպագրական արվեստով, բնագրային հատկանիշներով, և արտաքին ձևավորումով:

Աստվածաշնչի հրատարակությունը կոթողային գործ էր իր ժամանակի համար, իր գեղեցիկ, պատկերազարդ տպագրությամբ, անխալ և մաքուր շարվածքով: Երկար տարիներ այլ հրատարակիչների համար ոսկանյան Աստվածաշունչը համարվում էր օրինակելի և հիմք՝ հինգ հրատարակությունների. «Ի յօրինակէ հնոյ տպեցեսլ, լուսատր հոգի Ոսկան վարդապետի յար ու նման ոչ աւելի, ոչ նուազ»:

Ոսկանյան Աստվածաշունչը «քազմա վըշտի, տառապակրութեամբ» գլուխ բերված, մի նոր աստիճանի բարձրացրեց մեսրոպատառ հայ հին տպագրության որակն ու նշանակությունը: «Տպագրության մամուլը առաջին անգամ էր լույս ընծայում այն փաստը, թե հայն էլ ընդունակ է երկար և դաժան աշխատանքով խոշոր հրատարակություններ անել» (Լեո):

Իսկ Ոսկան վարդապետը, ըստ Օրմանյան սրբազանի բնութագրության, «տպագրության ձեռնարկին կատարելապես նահատակ մը եղավ, տպարանի փոշիներուն մեջ թավալող այս սրբազան արքեպիսկոպոսը, մինչ շատ դյուրին էր իրեն, յուր ծագումով և աստիճանով՝ փառքերու և հեշտություններու մեջ անցնել յուր կյանքը, յուր դասակից եկեղեցականներու նման»:

Ոսկանի կյանքը եղավ պայքար հանուն **Լույսի**, հանուն առավել **կյանքի**, հանուն հայ դպրության, գրի ու խոսքի հավերժության:

Արդարև, Աստվածաշնչի տպագրությունը մեսրոպաշունչ հայ մշակույթի հաղթանակն է և փառապսակը, ձեռք բերված խորունկ հավատքով, ինքնագիտակից նվիրումով և հայրենասիրական շնչով:

Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակը, այդ շքեղ իրագործումը, պան-

ծացումն է հայ գրի ու դպրության, հայ մշակույթի:

Ազգովին, որպես եկեղեցի և ժողովուրդ, հոբելյանական այս տարվա մեջ, սրտագին առիթն ունեցանք ոգեկոչելու և վերապրեցնելու մեր անցյալի մշակութային պատմության պայծառ թվականներից մեկը, որպեսզի մեծ վստահությամբ գնահատենք այսօրը, որ մերն է, և հավատքով, լավատեսությամբ նայենք գալիք է՛լ ավելի պայծառ օրերին:

1666 թվականը մեր մշակույթի պատմության անմոռաց լուսավոր հանգրվաններից մեկն է:

Աստվածաշնչի տպագրության մտահղացումն ու իրականացումը մեծ խորհուրդ ունեն հայ ժողովրդի հոգևոր, մշակութային և քաղաքական կյանքի պատմության համար:

Ոսկանյան Աստվածաշունչը նոր թափ, նոր ոգի և նոր որակ հաղորդեց Սահակ Մեսրոպյան մեր մշակույթին:

Փառք հայ մշակույթի բոլոր երախտավորներին:

Երբ ամեն անգամ ձեռք ենք առնում Աստվածաշունչը, «այսմ նորատնկոյ Բուրաստանի և աստուածակերտի դրախտի և յոքնազանի այգոյ և յեղեմաբղխի գետոյս, որ ռոտգեալ արբուցանէ և բողբոջեալ պտղաբերէ յոգիս բանականաց զպէսպէս տեսակս առաքինութեանց և վարուց բարեաց», Ոսկան վարդապետի համեստ խնդրանքով հիշենք «միով հայր մերով» Աստվածաշնչի տպագրության իրենց բարոյական, նյութական, աշխատանքային նպաստը բերած բոլոր, բոլոր երախտավորներին, ինչպես նաև «զամենեսեան զաշխատաւորս և զբարեմիտ ջանացողս»:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

